ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԸՆԴՈՒՆԵՑ «ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔՆԵՐ» ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆԸ

Հոկտեմբերի 8-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց «Համաշխարհային ժառանգության քաղաքներ» կազմակերպության տնօրենների խորհրդի անդամներին՝ ուղեկցությամբ Էջմիածնի քաղաքապետ Կարեն Գրիգորյանի:

Հանդիպմանը կազմակերպության նախագահ, Բիմսթերի (Նիդերլանդներ) քաղաքապետ Հարրի Բրինքմանը Նորին Սրբության ներկայացրեց կազմակերպության կողմից կատարվող աշխատանքները, ինչպես նաեւ ուրախություն հայտնեց Էջմիածին քաղաքի տոնի օրը Հայաստանում գտնվելու առիթով:

Ողջունելով կազմակերպության տնօրենների խորհրդի անդամների այցը հայոց հոգեւոր կենտրոն՝ Նորին Սրբությունը կարեւորեց կազմակերպության առաքելությունը՝ ի խնդիր պատմական քաղաքների հոգեւոր-մշակութային արժեքների պահպանության: Խոսելով Հայաստանի պատմամշակութային արժեքների մասին՝ Վեհափառ Հայրապետն ընդգծեց, որ հայ ժողովուրդը բոլոր ժամանակներում յուրահատուկ վերաբերմունք է դրսեւորել իր արժեքների նկատմամբ եւ, հակառակ դարերի ընթացքում կրած կորուստների եւ ավերածությունների, ջանք չի խնայել վերականգնելու եւ նորոգելու իր սրբավայրերն ու պատմական հուշարձանները: Անդրադառնալով հարուստ պատմական ժառանգության պահպանման ուղղությամբ Հայոց Եկեղեցու կողմից ձեռնարկվող միջոցառումներին՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսը նշեց, որ Եկեղեցին իր սուղ միջոցներով անում է հնարավորը՝ հայրերից ստացած ժառանգությունն անխաթար ու ամուր պահելու եւ այն նոր սերունդներին փոխանցելու համար:

Իր խոսքում Վեհափառ Հայրապետը, ուրախություն հայտնելով Էջմիածին քաղաքի եւ կազմակերպության միջեւ ձեւավորված համագործակցության առիթով, վերստին իր գնահատանքը հայտնեց ներկաներին՝ համամարդկային արժեքների նկատմամբ ցուցաբերվող ուշադրության եւ հոգատարության համար:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԸՆԴՈՒՆԵՑ ԼԵՆԻՆԳՐԱԴՅԱՆ ՄԱՐԶԻ ՆԱԽԱՆԳԱՊԵՏԻՆ

Հոկտեմբերի 11-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Լենինգրադյան մարզի նահանգապետ Ալեքսանդր Դրոզդենկոյի գլխավորած պատվիրակությանը՝ ուղեկցությամբ ՀՀ Արագածոտնի մարզպետ Սարգիս Սահակյանի եւ Սանկտ-Պետերբուրգում ՀՀ գլխավոր հյուպատոս Վարդան Հակոբյանի: